

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐԻ ԶԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն).
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Ցայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐԻ ԳՐԻԳՈՐ ՍՐԵՐՈՒՆԻ

Ներկայ մայիսի 18-ի գիշերը, իր ներստապառ կալուածում, յանկարծակի վախճանվեց

Երդուեալ հաւատարմաւոր

ՆԵՐՍԻՍ ԱՍԼԱՆԵԱՆ ԱՌԱՔԻԳԵԱՆ

որի մասին խորին վշտով յայտնում են հանգուցեալի զաւակները ազգականներին և ծանօթներին: Թաղումը տեղի կունենայ էջմիածնում կիրակի, մայիսի 23-ին:

ՇՈՒԼԱԻՏԻՐՑԻ ՄԵԼԻՔ ՍԱՐԳՍԵԱՆՑ ԳՐԻԳՈՐԸ

վախճանվեց Թիֆլիսում ամսիս 19-ին: Իր ամուսին Սոնիան, իր քոյրեր՝ Գալին, Մարիամը և քրոջորդի Բանարեանց Մարգարէն սրտի ցաւով այդ մասին յայտնելով նրա հայրենակիցներին ու բարեկամներին, ինչպէս և ինքն իր ամբողջ կյանքը, շատ քիչ, երեկոյան 7 ժամին նրա բնակարանը, Բաղամանի տուփի 19: Կիրակի, առաւօտեան ժամի 10-ին հանգուցեալի մարմինը կը տանվի Նորաշէն եկեղեցին, ապա այնտեղից Սոֆիանքի գերեզմանատունը:

1—1

Նատալիա Սաչաւորեան և Գեորգ Դարչոյեան Մանուշարեանները, Սօֆիա Դարչոյեան և Ստեփան Անարոնեան Գամայեանցները, Գեորգեան Ստեփանեան Զահարեան, Ուսանա Քանդիրեան Տէր-Առաքելեան, Եղիսարէթ Քանդիրեան Եղանեան, Եփեմիա Քանդիրեան և Միքայէլ Զարբաբեան Մանուշարեանցները ցաւօք սրտի յայտնում են: առաջինը իր թանգագին ամուսնու, երկրորդը՝ հօր, չորրորդը՝ աներոջ, միւսներն իրանց թանգագին և անմոռանալի եղբոր և վերջինս իր աներոջ որդու:

ԳԱՐՁՈ ԹԱՆԳԻԼԵԱՆ ՄԱՆՈՒՉՍՐԵԱՆՑԻ

մահը: Ամբիճը կը լինի շաբաթ, մայիսի 22-ին, երեկոյան 7 ժամին, իսկ մարմինը յուղարկուելով իր լինի կիրակի, մայիսի 23-ին, առաւօտեան ժամի 10-ին սեփական տնից, որ գտնվում է Բողոքի և Կոստանտինովսկի փողոցների անկիւնում, դէպի էջմիածնեցոյ ս. Գեորգ եկեղեցին և այնտեղից էլ Սոֆիանքի գերեզմանատունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատերազմող կողմերի դիրքերը.—ՆԵՐՍԻՍ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. ՀԵՌԱՔԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Պոստ մը Ս. Լուի աշխարհահանդէսի մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՅՈՑՑ ՍԸ Ս. ԼՈՒԻՍ ԱՆԵԱՐԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՋ
(Նամակ Ամբիճից)

Նապօլէօն Բօնաբարդ անգլիացոյց դէմ բացած երկարատեւ պատերազմը շարունակելու համար զբաղական ուժի պէտք ունէր. այս պէտքը հոգալու համար, այսօր Միացեալ-Նահանգներու զինուոր մէկ երկրորդ մասը կազմող Լուիսիանայի կողմէն հարուստ երկրի 1803 ապրիլ 30-ին կը ծախէ Միացեալ-Նահանգներուն 15,000,000 դոլարի միայն: Ս. Լուիսի ներկայ աշխարհանդէսը կազմակերպւած է տօնակա համար այս գնման հարկարմեակը, որը անցեալ տարի պիտի կատարուէր, բայց շէնքերու մեծ մասը տակաւին աւարտած չէր լալով այս տարի միայն բացուեցաւ:

Ս. Լուիսի աշխարհանդէսը մինչև այսօր Կոլումբիան ունեցող մեծ աշխարհանդէսներու ամենէն ընդարձակը ու մեծածախը եղած է: Արդարև 1851-էն սկսեալ տեղի ունեցող նշանաւոր աշխարհանդէսներն են:

Տարած. քառ. մէթր. Միլիոն.

1851-ին Լօնդօնի մէջ	73,150	9,000,000 ֆ.
1855 » Պարիզի »	168,000	11,500,000 »
1867 » » »	687,000	23,440,000 »
1876 » Ֆիլադելֆ. »	1,150,000	40,000,000 »
1873 » Վիեննայի »	1,834,000	58,000,000 »
1889 » Պարիզի »	958,572	56,500,000 »
1893 » Չիքագօյի »	2,236,000	130,000,000 »
1900 » Պարիզի »	1,597,000	100,000,000 »
1904 » Ս. Լուիսի »	2,690,000	250,000,000 »

ՊԱՏԵՐԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՐԱՄԵՐԻ ԴԻՐՔԵՐԸ

V

Վերջին հեռագրերը ցոյց են տալիս, որ եապօնական զօրքերը Մանչուրիայում արագ շարժումներ չեն անում և շարունակում են սպասողական դիրքի մէջ մնալ. իսկ ռուսական զօրքերը, որոնք մինչև այժմ սպասողական դիրքի

Ս. Լուիսի աշխարհանդէսը դեռեւս ընդարձակ արեւմտեան ծայրը հասարակաց մի ընդարձակ պարկի մէջ: Ցուցահանդէսին զբոսաւոր շէնքերը կը կազմեն կենտրոնական մասը՝ որ կը յիշեցնէ հոլանդացի մը ձևը, որուն շուրջը սփռուած են օտար կառավարական տղաւթները «pavillon» և ուրիշ երկրորդական շէնքեր: Այս հոլանդացի ընտանիքին փոքրիկ բարձրութեան մը վրա, շքեղ նուագաստան մը կառուցուած է 200 ոտք բարձրութեամբ, բոլորաձև, սիւնապատ, կրելով իր վրա հակալ գմբէթ մը. այս շէնքը արուեստահանդէսին ամենէն նշանաւոր մասը կը կազմէ իր տեսքով, շքեղութեամբ և իր ճարտարապետական արուեստով: Ցուցահանդէսի այս մասէն կարելի է դիտել ցուցահանդէսի ընդհանուր տեսարանը, աւելի հեռու՝ ընդարձակ հօրիզօնը: Շէնքին ճակատէն և, երկու կողմերէն յատկապէս անհրաժեշտ զանաւորներ, որոց երբեք չեն կառուցուած են ցուցահանդէսի գլխաւոր շէնքերը: Այս ծառուղիներու սկզբնաւորութեան մօտէն, նուագաստանի ճակատէն և երկու կողմերէն՝ դէպ յատկապէս, կիշնան երեք շարք ջրվէժներ, շրջապատուած խմբարձաններով: Այս ջրվէժներու թափած տեղը կը կազմէ կեդրոնական ընդարձակ աւազանը իր աղբիւրներով. այս աւազանին վերին և ստորին, ալ ու ձախ երկու կողմերէն կը բաժնուին չորս շրանցքներ, որոնք կը յանգնին կողմնային երկու ծառուղիներու և անոնց մէջէն անցնելով իրար կը միանան: Ահա այս է ցուցահանդէսի գլխաւոր տեսարանը. այժմ շատ պարզ կերպով պիտի նկարագրենք անոր գլխաւոր շէնքերը իրանց պարունակութեամբ:

Դաստիարակութեան պալատը կառուցված է

մէջ էին, մտնում են ներգործական գործողութիւնները շրջանը: «Нов. Вр. լը-րագիրը ռուսաց բանակի մինչև այժմ ընդամենը դիրքը բացատրում է հետեւեալ կերպով: Մանչուրական ռուսաց բանակի հրամանատար գեներալ Կուրօպատկին սկզբում չունէր իր տրամադրութեան տակ այն բոլոր տարրերը, որոնք ապահովում են անպայման և վճռական աշուղտութիւն: Նրա գնալուց յետոյ սակայն շատ բան արվեց այդ աշուղտութիւնը իրականացնելու և մանաւանդ զօրքի թիւը մեծացնելու համար: Լաօսանից ստացած վերջին հեռագրերը զբաղական ձևով հաւաստիացնում են, որ Ռուսաստանից մտնում են Մանչուրիայի սահմանները նորանոր գնդեր: Երկու նոր զօրաբաժիններ՝ զինքի կոչելը գրաւական է, որ զօրքերի հասանքը դէպի պատերազմական բեմը որոշ ժամանակ անընդհատ կը լինի: Սակայն եթէ էապէս կարեւոր է գեներալ Կուրօպատկինի զօրքի ոյժը հասցնել մի այնպիսի թւի, որ անհրաժեշտ է եապօնացիներին յաղթելու համար, միաժամանակ պակաս կարեւոր չէ, ի հարկէ, և այն, որ այդ գործը կատարվի կարելիին չափ կարճ միջոցում: Պատերազմի իւրաքանչիւր աւելորդ մի օրը մի ծանր արեւտեսական բեռ է պետական գանձարանի, երկրի արդիւնաբերական ոյժերի համար: Բայց արդե՞ծ կարելի է արագացնել զօրքերի փոխադրութիւնը, այսինքն փոխադրել Ռուսաստանից դէպի Մանչուրիա երկու կամ գոնէ մէկ ու կէս անգամ աւելի զօրք:

Մասնագէտները ասում են, որ կարելի է՝ նպատակաւոր մարկագրակերպութեամբ: Երբ որ սկսեցին շինել Միլիթի երկաթուղին, ոչ ոք այն ժամանակ չէր ենթադրում թէ այդքան վաղ նա հարկաւոր կը գայ պատերազմի նպատակների համար: Այդ պատճառով նա յարմարեցված էր գնացքների քիչ թւով համար: Բացի այդ՝ նրա շինութեան ժամանակ ծախքերը պակաս անելու նպատակով չէին գործադրու-

կենտրոնական մեծ աւազանին ամբողջ աշխարհային եղբին վրա, երկաթուղիներն է 750 ոտք, լայնութիւնը 525. ծախս եղած է 350,000 դոլար, շէնքին ճարտարապետական ոճը յունական է: Այս պալատին մէջ սխես մասիական կերպով ի ցոյց դրված են Միացեալ-Նահանգներու և զանազան երկրներու դաստիարակութեան ամբողջ երեւոյթներն ու կերպերը, այնպէս որ դիւրաւ և ակնյայտի կերպով կարելի է զանոնք քննել և իրար հետ բնութագրութեան դիտել: Հոն ցոյց տուած է մանկապարտէզներու և վարանսի դպրոցներու տարրական կրթական մէթօդներ, երկրորդական և բարձրագոյն դաստիարակութեան մեթօդներ, մասնաւոր դիտական վաճառատան, բժշկական բարձր ուսումնական ուսուցման մեթօդներ և առարկաներ, համալսարանական, արհեստական ու ճարտարապետական դպրոցներու վերաբերման գործիքներ և արտագրութիւններ: Դիտական այս բոլոր ճիւղերու և հաստատութիւններու վերաբերեալ մատենագրարներ, միւլտիֆոններ, դասական գիրքեր, դպրոցական առարկաներ, դպրոցներու և համալսարաններու յատակագրներ, օրինակներ ծրագրիչներ և այլն: Չը մոռանալ յիշելու, որ դաստիարակութեան շէնքին մէջ մասնաւոր տեղ մը ալ յատկացուած է սեւամորթներու և ամերիկեան կարմիր մորթներու դիտական ու դաստիարակութեան կերպերու:

Գեղարուեստից պալատը կառուցված է նուագաստանի ետեւի կողմը, բաղկացած է չորս մասերէ, շինված է ամբողջովին բարով և աղիւսով. մենակ պալատն է, որ ցուցահանդէսէն վերջ կանգուն պիտի մնայ: Մեծութիւնն է 850 ոչ 450 ոտք, ծախս եղած է 1,040,000 դոլար:

Այս պալատին մէջ ի ցոյց դրված են գե-

ված այնպիսի պայմաններ, որոնք կարեւոր են հեռաւոր Արեւելի ներկայի պահանջների համար: Եւ պէտք է զարմանալ, որ այժմ ճանապարհների հաղորդակցութեան վարչութիւնը կարող եղաւ կարճ միջոցում յարմարեցնել երկաթուղին այն պաշտօնին, որը նա այժմ կատարում է և որը սակայն դեռ բաւական չէ պատերազմական գործողութիւնների պահանջների համար: Այլի առաջ ունենալով այդ գրութիւնը, կամայ ակամայ հարց է ծագում՝ օգտվել բացի երկաթուղուց և բոլոր այն միջոցներից, որոնք կարող են նպաստել մարդկանց և պատերազմական մթերքների տեղափոխութեանը դէպի պատերազմի բեմը: Այդպիսի պաշտօն կարող են կատարել օրի նակ գետերը իրանց ճիւղաւորութիւններով: Նպատակի համեմատ համար սակայն անհրաժեշտ են ոչ միայն եռանդ և շատ աշխատանք, այլ և, որ գլխաւորն է, ջանքեր կարեւոր ժամանակը չը կորցնելու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մեր բերել էինք Բագուի «Каспий» լրագրի աշխատակից պ. Աղանովի կարծիքը արեւելեան ընտանիքութիւնների մասին և զարմանք էինք յայտնել, որ պ. Աղանովը, բնականութիւնների օրինակ բերելով Չինաստանն ու Պարսկաստանը, չէ դրել այնպիսի տիպական ընտանիքութեան անունը, որպիսին է Թիւրքիան: Այժմ պ. Աղանովը պատասխանում է մեզ: Նախ և առաջ նա ուզում է բացատրել, թէ ինչ նպատակով ենք մենք արել այդ նկատողութիւնը: Եւ ասում է.

«Մշակը» դրանով ուղեցել է ասել, թէ ի նկատի ունենանք այն ամենը, ինչ այդ լրագիրը արանից առաջ դրել է իմ և «Каспий»-ի մասին, թէ, իմացել, պ. Աղանովը, լինելով Թիւրքիայի ֆանատիկոսը, չէ հաւատում ընտանիքութիւնը ամեն տեղ, բացի միայն Թիւրքիայից, և թէ ամեն ինչ, որ Թիւրքական է, նոյն իսկ ընտանիքութիւնը, նրա սրտին է:

Այս, ինքնուրուիքեան այդպէս էր դուրս գալիս: Պարսկաստանը, օրինակ, ընտանիքաւոր

զարուեստական արտագրութիւններ, որոնք երկու որոշ մասերու բաժնուած են. մի մասը կը պարունակէ, 1803-էն մինչև 1892 արտագրված արուեստական գործեր և կամ այս շրջանին մէջ ապրող արուեստագէտներու արտագրութիւններ, որոնց գործերը ուղղակի աղբիւրներն են ունեցած են ներկայ արուեստին վրա: Երկրորդ մասը այս թուականի սկսեալ մինչև ներկայ թուական: Ամբողջ ցուցահանդէսը կը պարունակէ իւրաքանչիւր, շրանկարներ, գծագրութիւններ, զարդական նկարչութեան, քանդակագործական և ճարտարապետական արտագրութիւններ, նմանապէս ձեռագործ գեղարուեստի ուրիշ ինքնատիպ արտագրութիւններ: Ամեն ազգերու գործերը իրենց առանձին բաժին ունին, այնպէս որ շատ դիւրին է զանոնք զանազանել իրենց առանձին յատկաորոշութիւններով:

Ազատ արուեստներու պալատին ճակատը շինված է գաղղիական վերածնութեան ոճի համաձայն, երբեմն մասեր աւելի կը ներկայացնեն դասական բան վերածնական ոճը: Պալատու երկայնութիւնն է 750 ոտք. լայնութիւնը 525. ծախս եղած է 500,000 դոլար:

Այս պալատին մէջ ի ցոյց դրված են տասն և երեք խումբ արուեստներ, տպագրութիւն, լուսանկար, գիրքեր և հրատարակութիւններ, բարտեզներ, դրամներ և մետաղներ, փխրուփայլական գործիքներ, ճշտական գործիքներ, բժշկական և վիրաբուժական գործիքներ, դեղագործական առարկաներ, երաժշտական գործիքներ, թուղթի արուեստագործութիւն, քաղաքական և զինուորական ճարտարագիտական արուեստներ, հասարակական գործերու ծրագրիչներ, ճարտարապետական արուեստներ և այլն:

(Կը շարունակվի)

ատարացնում են հապօնացիները, որովհետև Մոսկովից հեռագրի միջոցով Յվրիչովի աման մասին: Մի քանի հապօնացի գերիներ, որոնք բերվեցին Պորտ-Արտուր, հաստատում են, թէ վճարված է գրոհ տարվ լիբերալ բերդը, ինչքան զոր որ լինի:

Եսպանացիներ բարձրացել են «Վարեագ» ռազմաբազային լրագրերը հաղորդում է, որ ապրիլի 12-ին, հապօնացիներին աշող-վեց, վերջապես, ծովի տակից բարձրացնելու համար խորատուղված կրէյսեր «Վարեագը»: Նրա բարձրացնելը շատ ժամանակ է ջանքեր պահանջեց, շուտով նա կը տարվի նաւաշինարանը, Չեռուպո: «Վարեագը» կը կցվի հապօնական նաւատորմին: (Варж. Вѣд.)

Չինաստանի տրամադրութեան փոփոխութիւնը: «Պետրոպոլիսի» կորստից յետոյ, չինական հասարակութեան և ժամուրի մէջ զգացվեց հակառուսական սաստիկ գրգռում: Եւրոպայի, հապօնական նաւատորմի կրած վնասները յետոյ, ժողովուրդը հանդարտվել է: (Т. А.)

Լոյսացող ակամներէ հարցը եւ չեզոք պետութիւնները: Անգլիական ժամուրը և, գլխաւորապէս «Թալմա» լրագիրը մի ամբողջ արշաւանք է սկսել Ռուսաստանի դէմ յանուն միջազգային իրաւունքի, Ինկիլի ծովում թափառող լողացող ականների առիթով: Եսպանական զորահաւոր «Պետրոպոլիս» ոչնչացաւ, ինչպէս յայտնի է, «Թափառող ականից», որ ձգել էին ծովը ռուսները, արդ անգլիական լրագիրները ստանում են, որ «Պետրոպոլիսը» զրահաւորը պայթեցնող ականները գցված էին ծովը երեք միլոնաչափ տեղ հեռու ակից, մինչ «Պետրոպոլիս» հարուածը ստացաւ Պորտ-Արտուրից 10 միլոն տեղ հեռու, բայց ծովի վրա: Այդ հիման վրա, լրագիրները հարց են դրել, թէ արդեօք պատերազմող կողմերը իրաւունք ունեն ծովի մէջ ամեն տեղ ականներ գցել, քանի որ ուրիշ, չէզոք նաւեր ևս երթնեկելով, կարող են հանդիպել նրանց և ոչնչանալ: Նոյն իսկ լուրեր են պատում, որ մի քանի պետութիւններ պատրաստվում են բողոքել այդ տեսակ վարմունքի դէմ և պահանջել, որ պատերազմող կողմերը իրաւունք չունենան ականներ գցել բաց ծովի մէջ:

«Ի հարկէ»-ստանալ այդ առիթով, «Berl. Tagblatt» լրագիրը-թէ կարելի արդար չը համարել այն միտքը, ինչ խմբերով լողացող ականները ազատ ծովի վրա, որ ծառայում է իբրեւ առևտրական ճանապարհ բոլոր ազգերի համար, խոշոր վտանգ են ներկայացնում: Բայց ինչ կդանակով դրա առաջին առնել: Միակ եղանակը կը լինէր յայտարարել պատերազմող կողմերը պատասխանատու վնասների համար և դիպրոմատիկական ճանապարհով ստիպել նրանց փոխարինել այն վնասները, որ ականներից կը ստանան չէզոք նաւերը: Եթէ պատերազմող կողմերը նոյն իսկ պարտաւորվում են ականներ չը ձգել ծովափի գծից դուրս, դարձնալ դա չի օգնի թէ որտեղ էին ձգված այն ականները, որոնք յետոյ ազատ ծովն են ընկել: Ո՞վ պէտք է մերկայանէ պատերազմողին, եթէ նա գիշերով, կամ նոյն իսկ ցերեկը, ականներ կը ձգի բաց ծովում, իսկ յետոյ կը սկսի ուրախալ:

Ամենալաւն կը լինէր, իհարկէ, եթէ կայանար միջազգային մի օրենսդրութիւն, որ արգելէր պատերազմի ժամանակ ականներ, կամ ընդծովային մակդիրներ գործածելը: Յամենայն դէպս լողացող ականների հարցը այնքան կարեւոր է, որ միտք է ծագել պետութիւնների կոնֆերանսի կազմել և քննել թէ ինչ միջոցներով կարելի է նրանց պատճառած վնասները խափանել: (НОВОСТИ)

Վոլիք Յվրիչովի մոտ հեռախոսակա երբեք չի գրում են, որ այդտեղի զինուորական շրջաններ կարծիքով, Յվրիչովի ճակատամարտը դարեգուրու է կազմում պատերազմական աւելուստի պատմութեան մէջ: Այդտեղ իրար հանդիպեցին երկու հակառակորդներ, արժանի միմեկից. պաշտպանողների հերոսութիւնը հաւասար է յարձակվողների մասկան համար ունեցած ատելութեան: Իսկ այդպիսի պայմաններում, ի նկատի ունենալով սպառազինութեան նորագոյն տեխնիկան և վնասն աւելի կատարելագործված եղանակները, գերմանական ռազմագիտութիւնը համարել է մինչև այսօր թշնամու դիրքերի առումն անհաւանական:

«Kreuzzeitung» թերթի աշխատակիցը, որ ընդհանուր շտաբի օֆիցեր է, գրում է. «Այժմ կարելի է փառաբանաբար պայքարելով համարել զաշտապի ամբարշտված բարձր դիրքերի ճակատային յարձակման հարաւորութիւնը, որը, նորագոյն գերմանական պատերազմական

թէօրիան հերքում էր»: «Vos. Zeitung» գրում է. «Յվրիչ-ժուրի ճակատամարտը այսուհետեւ կը ծառայէ կապիտալ օրինակ զինուորական ակադեմիաներում ուսուցման ժամանակ: Եսպանացիների ահազին կորուստները անխուսափելի էին: Ընդհանուր կարծիքով, այս շաբաթվայ ընթացքում կարեւոր դէպքեր են ըստապում: Պորտ-Արտուրի ճակատագրի լուծումը-միայն մի քանի օրերի հարց է: (P. B.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թէօրիան հեռագրում են, որ այդտեղի ռուսաց լրագրող զեպարե Վլասովը վախճանվել է մայիսի 14-ին: Վլասով զեպարե նշանակվեց 1902 թուին, սեպտեմբերին. նա առաջ թաւրիկի ռուսաց հիւպատոսարանի բարտուղար էր, ապա Բէլուսով՝ հիւպատոս և ընդհանուր-հիւպատոս Մէլեդու: Այդտեղից նա տեղափոխվեց զեպարեի պաշտօնով Հարէլստան: 1902-ին, նա նշանակվեց զեպարեի թէօրիանով, իբրեւ մի մարդ, որ լաւ ծանօթ էր Պարսկաստանին, սակայն մասը շուտով խեղցնում և թողնում էր, որ նա իրագործէ իր ծրագրերը՝ Պարսկաստանի վերաբերմամբ:

Մայրաքաղաքի ռուսաց լրագիրներում տպված են Մասունի զեպարեի մանրամասնութիւնները: Գէլի-գուգանի անալոգ կըրուից յետոյ, որ թիւրքաց զօրքը կորցրեց 1000 հոգի, թիւրքերը օգնութիւն ստանալով, նորից յարձակում գործեցին. այդ յարձակման մասնակցեցին 15,000 կանոնաւոր զօրք և նոյնպիսի բերդեր: Երկու օրվայ արակոծութիւնից յետոյ քանդվեց Բէլի լեռնոտ գիւղը, որ անբացել էին ապստամբները Անդրանիկի հետ: Բէլիով թիւրքներին կրակով, ապստամբները, նրանց հետ և ժողովուրդը, աղամարդիք և կանայք, աւելի բարձր սարերը գնացին, Անդրիկ բարձրութիւնների վրա, որ Մասունի ամենամասնակ մասն է կազմում: Նրանց դիրքերը պաշարված են թիւրքերից: Երեւանները և պառնանները, որոնց Անդրանիկը չը կարողացաւ հետը տանել, գերի ընկան թիւրքերի ձեռքը: Նրանց տարան Մուշ և յցրին մի տեսակ կինդրոսականացած բանակների մէջ առանց կիսակրի և խնամքի: Նրանց վիճակը յուսահատական է: Դաշտի վրա թիւրքերը այրեցին և կրակեցին Բերդից գիւղը, որ չէր մասնակցել ապստամբութեան: Դաշտային հայ ժողովուրդը ահաբեկված է: (Рус. Вѣд.)

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

20 մայիս

ՊԵՏԵՐԲՈՒԴԻ: Գիտերալ-լեյտնանտ Տրէպովի հեռագիրը. «Բանակի հրամանատարը որպէս զի զօրքի մասերին շուտափոյթ հասցնելին այն նպատակները, որոնք ուղարկվում են անմիջապէս գիտերալ-աւտիւստ կուրսպատկին անուշով, հրամայեց կազմել բանակի սանիտարական մասի վարչութիւն կից մի առանձին կոմիտէտ, իմ անձնական առաջնորդութեան ներքոյ, յանձնելով կոմիտէտին ստացումը և ուղարկումը զօրքերին նրանց ուղարկված ընծաները և նպատակները:

ՄՈՒՍԿՈՒ, մայիսի 20-ին: (Սեփակ. թղթակցից): Ստացված տեղեկութիւնների համաձայն, Յվրիչ-ժուրիան դիրքերի վրա հապօնացիների գործած յարձակումը մայիսի 13-ին, սկսվեց առաւօտեան ժամը 5-ին: Եսպանացիները առավ շարժեցին երեք դիվիզիա 120 թիւանութիւնով: Թշնամու 4 թիւանութեան ձիւք և վեց ականային նաւեր աշակցում էին յարձակման, կրակով: Մեր արտիլլերայի մեծ մասը ջարդվեց և հապօնական հետևակը սկսեց դիրքի ձախ թիւ հետը անցնել: Մեր զօրախումբը թշնամու ճնշող գերազանցութեան պատճառով, երեկոյեան ժամը 8-ին թողեց դիրքը և հեռացաւ դէպի Նանգուան-լին, հաւաքելով ողջ մնացած թիւանութիւնը: Մեր կորուստները սպանվածներով և վիրաւորներով-30 օֆիցեր և 800 զինուոր: Եսպանացիները կորուստը, ըստ երեկոյթին, շատ նշանաւոր է:

ՉԻՖՈՒ: (Բէլալ): Դադուանից եկած չինացիները հաղորդում են, որ վերջերս Դադուան ակ ի լաձ հապօնական զօրքերի թիւը 8-10,000 է. նրանք դիմեցին դէպի Ֆին-խուանցէն, ուր ուղարկված են օգնական զօրքեր նաև ուրիշ կետերից:

ԲԼԱԳՈՒՆԵՉԵՆՍԿԻ: Երանգական դատարանում սկսվեց ընդունելիւն այն հարուստ մօլականների սենացիոն գործի, որոնք ներկայացուցիչ էին «Դերիգոր Կօրեցի» և որպէս առևտրական տան և մեղադրվում են, թէ դիտմամբ հրդեհել են Կուլենցիցով կայարանի մօտ, Ամուրի վրա, «Գիլին» շուգնաւը, թէլի, մորթիներ և մանուֆակտուրայի կասկածելի բեռնով, որ ապահովագրված էր, 315,000 ռուբլի գումարով, այն նպատակով, որ ստանան ապահովագրական պրէմիան:

ՊԵՏԵՐԲՈՒԴԻ: Գիտերալ-աւտիւստ կուրսպատկին հեռագիրը Նորին Մեծութեան, 1904 թ. մայիսի 19-ին. «Ֆինխուանցէնի կողմում ամեն բան հանգիստ է: Սպառնալքաւոր, որ դատարկեցին հապօնացիները, մայիսի 18-ին, նորից գրաւեցին մեր զօրքերը: Մայիսի 18-ին, Լաոլին անցրում, Միւսանից 14 վերստ դէպի հարաւ, խուզարկուեցին հրացանաձգութիւն ունեցան հապօնական մի զօրախումբի հետ, որ բաղկացած էր 2 վաշտից և կէս էսկադրոնից: Մեր կորուստը-վիրաւոր մէջ փոխութիւն չը կայ:

ԲՕՔԲՈՒՅՍԿ: Այրվեց հրէական արհեստագիտական և 65 աշակերտների համար հանրակացարան ունեցող դպրոցը: Վնասը 20,000 ռուբլուց աւելի է:

ՄՕՍԿՎԱ: Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան կառավարիչը ընդունեց ստանալական շրջանի և ժողովրդական դպրոցների պաշտօնականներին և միջնակարգ ուսումնարանների գլխաւորներին: Ողջոյնին ի պատասխան, նա ասաց. «Ուրախ եմ տեսնել ձեզ և ինչի Մոսկվայում, որի կրթական հաստատութիւնների մասին լաւ բան շատ եմ լսել. միայն մի փոքր մասի այցելութիւնը լաւ տպաւորութիւն թողեց: Գիտեմ, որ ծանր է ձեր աշխատութիւնը, բայց ձեր հոգին յարած է այդ աշխատութեան, իսկ այդ ժամանակ ոչ մի աշխատութիւն զարհուրելի չէ: Ես վստահ եմ, որ այն ծանր վիճակը, որի մէջ մենք այժմ գտնվում ենք, վաղանցուկ է և յոյս ունեւ, որ ձեր ունեցած սիրով դէպի գործը և ձեր եռանդով, դպրոցը կազմավորի այն աւելորդից, որ տուել է նրան օտարերկրային ազդեցութիւնը: Մէրը ամեն բանի յաղթում է: Փորձով գիտեմ, որ երբեք բաւական է մի հաստատութեանը որ գործը կանոնաւոր ընթացք ստանայ: Կառավարութիւնը պատրաստ է ցոյց տալ ձեզ ամենալայն աշակցութիւն: Յոյս եմ դրել ձեր փորձառութեան և ձեր գործը և թանգագին հայրենիքի համար ունեցած անձնաւորութեան վրա»: Համալսարանի ակադային դահլիճում ներկայացան պրօֆէսորները ընկալութիւն: Յիշելով, որ համալսարանի մի քանի պրօֆէսորներ իր ուսուցիչներն են եղել, գիտերալ Գլազով խոսեց համալսարանի բարեբաղ կապի մասին մասնագիտական ուրիշ դպրոցների հետ և ծանր ազդեցութիւնների առիթով բարձրագոյն դպրոցների վրա: Մոսկվայի համալսարանը միշտ պաշտպանում էր ուսանողներին և պրօֆէսորները շատ խելք, եռանդ և արտակցութիւն գործ դրեցին այդ ազդեցութիւնների և նրանց հետևանքների առաջն առնելու համար: Գիտերալը այն համոզմունքը յայտնեց, որ համալսարանը այսուհետ ևս կը վարվի նոյնպէս: Համալսարանի գրադարանում ներկայացան տէխնիկական դպրոցի պրօֆէսորները, որոնց գիտերալն ասեց, որ հերթական է արգիւնագործական կրթութեան ընդարձակելու հարցը, բայց ոչ ի վնաս ընդհանուրի:

Կ. ՊՈԼԻՍ: Բ. Դուրը խոստացաւ վաղը կամ երկու օրից ներկայացնել դաշնադիր պետութիւնների զեպարեների գրաւոր հաղորդագրութիւն մակեդոնական ժանդարմերի հարցի ֆինանսական կողմի վերջնական լուծման մասին: Ի նկատի ունենալով, որ սկսված է թիւրքաց նաւատորմի վերակազմութիւնը նոր նաւեր ձեռք բերելու միջոցով, Անգլիան այստեղի զեպարեանում մէջ հաստատեց ծովային գործակալի պաշտօն:

ԼԻՍՍԱՅՈՒ: Պորտուգալիայի և Սպանիայի միջև ստորագրված է դաշնագիր՝ միջնորդ դատարանի միջոցով ընկելու համար գործերը: Այդ դաշնագիրը կազմված է Հապայի պայմանագրութեան 19-դ յօդուածի ողու համաձայն:

ԲԵՐԼԻՆ: Եսպանական զեպարե տեղեկացրեց, թէ ծովապետ Տօգո հրատարակեց հաղորդագրութիւն, որ մայիսի 13-ից Լեհագուհեան թերակղզու ամբողջ ծովափի վրա, Բիցկլիօից մինչև Պուլանդեան, իսկական պաշարումն է սկսված, որ կը շարունակվի այսուհետ ևս:

ՄՕՍԿՎԱ: Այսօր, Գլխաւոր ծննդեան հաւերաւանի օրը, կոնսերվատօրիայում հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց: Ներկայ էին պրօֆէսորներ, ուսանողներ և հանգուցեալ կօմպօզիտօրի յարգողները: Ուղղիչ հիւնարկութիւնների համաժողովը լսեց մի շարք հաղորդագրութիւններ ուղղիչ ապաստարանների գործիւն մասին գաւառում: Վաղը կը կայանայ կօմպօզիտի հանդիսաւոր բացումը:

ՊԱՐԻՉ: Շանգայից հաղորդում են, որ Կօրէյի արեւմտեան ծովափի վրա երեւում էին 15 հապօնական փոխադրող մեծ նաւեր զօր-

քերով, որոնք ըստ երեկոյթին դիմում էին դէպի Նաւուի գետաբերանը:

21 մայիս

ՊԵՏԵՐԲՈՒԴԻ: Գլխաւոր շտաբին կից կազմված յանձնաժողովը հիւանդներին և վիրաւորներին հիւանդ Սերկիլից ուղարկելու և խնամելու համար՝ գիտերալ-լեյտնանտ Պետրոպոլիս հիւանդներին և վիրաւորներին ընդունելու համար Սերկիլի, Կազանի և Մօսկվայի զինուորական շրջաններում, դիմել տեղական ներքին խնամարկու յանձնաժողովներին, իսկ Իրկուտսկում, Օմսկում, Չելեպինսկում, Մոսկվայում և Պետերբուրգի զինուորական շրջանում, ուր ներքին խնամարկու յանձնաժողովներ պէտք է բացվեն ըստ չափու հարկաւորութեան, առաջարկութիւններով հիւանդներին և վիրաւորներին ընդունելու մասին մինչև յիշեալ յանձնաժողովները: Բացումը, պէտք է դիմել Պետերբուրգի զինուորական շրջանի շտաբին: Կայսրութեան մնացած տեղեկերում առ այժմ ենթադրութիւն չը կայ խնամել հիւանդներ, սակայն գլխաւոր շտաբին կից յանձնաժողովը շնորհակալութեամբ կընդունէ ամեն մի առաջարկութիւն վիրաւորներին և հիւանդներին տեղաւորելու մասին ընդունութեան և հանգանակութեան համար Ռուսաստանի մնացած նահանգներում: Յայտարարութիւնները հիւանդներ և վիրաւորներին իր մօտ ընդունելու ցանկութեան մասին այն տեղերում, որոնք չեն մտնում վերոյիշեալ զինուորական շրջանների կազմութեան մէջ, հարկաւոր է ուղարկել գլխաւոր շտաբի յանձնաժողովին: Պետերբուրգ, Английская набережная, 32: Գլխաւոր յայտարարութիւնների մէջ հարկաւոր է հաղորդել. 1) օֆիցերների և զինուորների որքան թիւ կարելի է ընդունել սեփական ծախսով. 2) բժշկական մարմնից որին պէտք է յանձնվի հակողութիւնը. 3) ինչ հեռաւորութիւն ունի բնակարանը երկաթուղու կամ շոգնաւային կայանի մօտակայ կայարանից: Իրկուտսկի I Խնամարկու յանձնաժողովը շրջանը կազմում են Իլիուտսկի և Նեի-սէյսկի նահանգները. II-ի՝ Օմսկը-Տօրայի, Տօմսկի, Աբդուլինսկի և Մեմիպալատինսկի նահանգները. III-ը՝ Չելեպինսկի, Կազանի, Պէրմի, Վեստկայի, Սիմբիւրսկի, Սամարայի, Սարատովի, Պէնզի, Աստրախանի, Օրենբուրգի, Ուֆայի նահանգները և Ուրալի, Թիւրքստանի շրջանները. IV-ը՝ Մոսկվայի-Մոսկվայի, Տվիլի, Եւրօսլավի, Տուլայի, Բաղանի, Տամբովի, Օրլովի և Վօրօնէժի նահանգները. V-ը՝ Պետերբուրգի զինուորական շրջանը կազմում են Պետերբուրգի, Նովոօրոկի, Պսկովի, Օրենսկի, Արխանգելսկի, Էստլանդիայի և Լիֆլանդիայի նահանգները բացի Բիզայի գաւառից: Պետական կօնսորը, Նորին Կայսերական Բարձրութիւն առևտրական ծովագնացութեան և նաւահանգիստների գլխաւոր կառավարչի յարուցած հարցը պատճառով, թիւեկացնելու համար գոյութիւն ունեցող կարգը՝ նաւահանգիստային տուրքերի այն գումարների վերադարձնելու մասին, որոնք անկանոն կերպով կամ աւելորդ մօտ են նաւահանգիստային գործերի կօմիտէտի յատուկ գումարների մէջ, հարաւոր համարեց, ընդհանուր կանոնից իրեն բացառութիւն, թողարկելու մաքսատուներին վճել յիշեալ գործերը առանց բանակցելու կօնսորային պալատների հետ այն դէպքերում, երբ վերադարձնելու ենթակայ գումարը 50 ռուբլուց աւելի չէ:

ՊԱՐԻՉ: Ռուսաց կառավարութիւնը՝ պահանջած լինելով յանձնել իրան, յանձնաժողովը ձեռքալալեց ռուսաց հալատակ Դօմիլիկ Լեազովսկու, որ մեղադրվում է 60,000 ռուբլի Մոսկվայի արդիւնաբերական ընկերութիւնից գողնալու մէջ:

ՊԱՐԻՉ: Պաշտօնական հաղորդագրութիւնը ցոյց է տալիս, որ Լօրենցիլի Նունցին ներկայ չէ եղել Գիլիսէի մօտ ընդունելութեան ժամանակ: Նոյնպէս ֆրանսիական միսիայի գործերի ղեկավարող Վատիկանում չէ լինում կարգիլալի մօտ:

ՄՕՍԿՎԱ: Այստեղի զինուորական դատարանը դատաւարտեց զրոգ-պատգամաւոր պրօֆէսոր Ստօյան Միխայիլովսկուն, որ առաջ մակեդոնական կօմիտէտի նախագահ էր, եթեմանսայ բանտարկելութեան իշխանի անձնաւորութիւնը անուանարկելու և նրան լրագրական յօդուածներով զրպարտելու համար: Դատարանը կանգնեցրեց դատավճռի կատարումը: ՄԻՄՖԵՐՈՊՈԼ: Գէպի պատերազմ ուղևորվեց Տալիսկան հիւանդանոցը՝ 200 մահաւորով, որ նուիրված է Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդօրօվնայի անուն և կազմված է նահանգապետ Տրեպովի նախաձեռնութեամբ:

